

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Չեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նունյանի, Արթուր Աղաբեկյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի՝ օրենքը կարգավորում է առավել կարևոր, բնորոշ և կայուն հարաբերություններ: Այդ առումով նախագծով նախատեսված լրացումներն օրենքի կարգավորման առարկան չեն հանդիսանում, քանի որ ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների կանգառների տեղաբաշխումն իրականացվում է քաղաքաշինական նորմերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1042-Ն և 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշումներին համապատասխան:

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս հարակից գեկուցմանը հանդես կգա Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանը:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՈՒՅՑ

«ԱԿՏՈՒՈՐԻՆԱՅԻՆ ՏՐՄՆՄՈՒԹԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՈՒՅՑ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Դոդված 1. «Ավտոմոբիլային տրամսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (5 դեկտեմբերի 2006թ., №Օ-233-Ն) 13-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ և 6-րդ մասերով։

«5. Ներքաղաքային և մերժադաշտային ավտորուսային կանոնավոր փոխադրումների երրույինների կանգառները տնտարացնվում են խաչմերուկներից առնվազն 50 մետր հեռավորության վրա։ Եթե երկու խաչմերուկների միջև տարածությունը 100 մետրից պակաս է, ապա այդ հառվածում կանգառների տեղաբաշխումն արգելվում է։

6. Միջքաղաքային և միջավայրական ավտորուսային կանոնավոր փոխադրումների երրույինների սկզբնակետի և վերջնակետի կանգառների տեղաբաշխումն ավտովայրաններից և ավտովայրաններից դուրս արգելվում է։»

Դոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Չեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Յրանուշ Հակոբյանի, Կարեն Կարապետյանի, Նահիրա Զոհրաբյանի, Շեղինե Բիշարյանի, Լիլիթ Գալստյանի և Անահիտ Բախչյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվում է հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և խորհրդի անդամների թափուր պաշտոնների համալրում՝ մրցույթային կարգով: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն «հեռարձակող լրատվական միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով:»: Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը չի ապահովում Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ հանձնաժողովի անդամի թեկնածուի ազատ ընտրության և նշանակման իրավունքը, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածի դրույթներին և ընդունելի չէ:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված պաշտոններում ուղղակի կամ անուղղակի նշանակումների, ինչպես նաև ընտրությունների կատարման առանձնահատկություններն սպառիչ սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահների, դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Արդարադատության խորհրդի կազմում Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկուական իրավաբան-գիտնականների նշանակումների ընթացակարգերի առանձնահատկությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված
լիազորությունները չեն կարող սահմանափակվել օրենքներով: Հանաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչից ուղղակիորեն բխում է, որ օրենքով լրացուցիչ լիազորություն սահմանվել կամ արդեն իսկ սահմանված լիազորության սահմանափակում նախատեսվել չի կարող:

Ընդ որում, եթե անգամ նշանակումների կարգը դիտարկենք որպես գործունեության կարգ, ինչը ևս չի կարող հիմնավորված համարվել, ապա միևնույն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի գործունեության կարգը կարող է սահմանվել բացառապես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կամ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Յարկ է նկատի ունենալ նաև, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և խորհրդի անդամներին պաշտոնի նշանակելիս Հայաստանի Հանրապետության Նախագահը կրում է քաղաքական պատասխանատվություն, ինչը կարող է հակառակվել մրցույթային կարգով պաշտոնում պարտադիր նշանակումներ կատարելու նորմին: Հայաստանի Հանրապետության Նախագահն իր հայեցողությամբ կարող է թափուր պաշտոնի համալրման նպատակով իր հրամանագրով կամ կարգադրությամբ ստեղծել հանձնաժողով և անցկացնել մրցույթ:

I. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. 2 –րդ հոդվածի՝

1) «բ» կետում «բառակապակցությունը» և «բառակապակցությամբ» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «բառերը» և «բառերով» բառերով.

2) «գ» կետում «անկողմնակալություն» և «բազմազանություն» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «անկողմնակալության» և «բազմազանության» բառերով:

2. 4-րդ հոդվածի՝

1) «ա» կետն իրավաչափ չէ: Անձը կարող է անզգուշությամբ կատարած հանցագործության համար ևս պատժվել անազատությամբ ուղեկցվող պատժատեսակով, օրինակ՝ կալանքով (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 120-րդ, 121-րդ և այլ հոդվածներ), ինչը

ևս բացառում է խորհրդի անդամի պաշտոնավարումը: Ընդունելի չէ պաշտոնավարումը բացառող հանգամանք համարել հանցակազմի սուբյեկտիվ կողմը կամ պատժատեսակը.

2) «բ» կետում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով.

3) «գ» կետը հանել՝ հաշվի առնելով եզրակացության 1-ին մասի երրորդ պարբերությունը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նախագծի 10-րդ հոդվածում:

3. 5-րդ հոդվածի «գ» կետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի համաձայն նախադասությունները հանվում են, այլ ոչ թե ուժը կորցրած ճանաչվում:

4. 7-րդ հոդվածի 1-ին մասն ընթացակարգային առունով անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործընթացին: Նիմնավորման կարիք ունի «նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ» դրույթը:

5. 10-րդ հոդվածը խմբագրել:

6. 12-րդ հոդվածի՝

1) «ա» կետով նախատեսված 41-րդ հոդվածի վերնագրի նոր խմբագրությունում «անդամները» բառն անհրաժեշտ է փոխարինել «անդամներին ներկայացվող պահանջները» բառերով.

2) «Դ» կետի ընդունումը կավելացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերը:

7. 16-րդ հոդվածի՝

1) «ա» կետում անհրաժեշտ է «բովանդակությամբ» բառը փոխարինել «խմբագրությամբ» բառով և «արտոնագիր» բառից առաջ լրացնել «հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման» բառերով.

2) «բ» կետը հանել:

II. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1. 1-ին հոդվածում առաջարկվող լրացումը համարակալել հերթական «Ժ.1» կամ «իբ» կետով:

2. 2-րդ հոդվածի՝

1) «ա» կետում «կետի» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասի» բառով, իսկ «մասի» բառը՝ «կետի» բառով:

2) «բ» կետի՝

ա. 8-րդ պարբերությունում՝

- պարզաբանման և հստակեցման կարիք ունի «հասարակական մասնագիտական կազմակերպություն» հասկացությունը, քանի որ այդպիսի կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չեն,

- նախատեսված երաշխավորություններին վերաբերվող դրույթն առաջարկում ենք հանել: Բացի դրանից, «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով, քանի որ հասարակական կազմակերպությունները գրանցվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

բ. 11-րդ պարբերությունը «դիմել է» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «առնվազն» բառով,

գ. 14-րդ պարբերության «գ» կետում «մասին» բառն անհրաժեշտ է փոխարինել «կանոնակարգ» բառով,

դ. վերջին պարբերությունը «երկու» բառից հոտո լրացնել «անգամ» բառով:

III. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1-ին հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով:

IV. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ («Հեռահաղորդակցության բնագավառ») բաժնում արդեն իսկ նախատեսված են հեռուստառադիրադրումների հեռարձակման համար պետական տուրքեր, ուստի հստակեցման կարիք ունի նախագծով առաջարկվող լրացման նպատակը: Առաջարկվող լրացումն անհրաժեշտ է կատարել 9-րդ բաժնում:

Նախագծերի՝

1) 1-ին հոդվածներն անհրաժեշտ է խնբագրել՝ համապատասխանեցնելով «իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին.

2) վերջին հոդվածներում «պաշտոնական իրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական իրապարակման օրվան հաջարդող տասներորդ օրը» բառերով.

3) հոդվածների համարակալումն անհրաժեշտ է վերանայել, համապատասխանեցնելով այն «իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: Հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են

արարական թվանշամներով: Յոդվածների ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Յոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Յոդվածի ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետերով:

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Դանիելյանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԵՌ-ՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՌԱՋԻՑԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (9 հոկտեմբերի, 2000թ. ին,
ՀՕ-97) 3-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ՝

«Փոխկապակցված անձիք՝ ամուսիններ, ծնողներ, երեխաններ, քույրեր, եղբայրներ:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 28-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու համար պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադրունկերություն, այսինքն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատաճեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն և գործում է սույն օրենքի, իր կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

բ) 4-րդ մասի «խորհրդարանական ժամ» բառակապակցությունը փոխարինել «խորհրդարանական շաբաթ» բառակապակցությամբ.

գ) 5-րդ մասը «անկողմնակալություն» բառից հետո լրացնել «քազմազանություն» բառը.

դ) 6-րդ մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել.

ե) 10-րդ մասը «քողարկում» բառից հետո լրացնել «առավոտյան և երեկոյան» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 29-րդ հոդվածի՝

ա) 5-րդ մասի «հայոց լեզվին» բառերը փոխարինել «հայերենին» բառով.

բ) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով՝

«ե) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 31-րդ հոդվածի՝

ա) 3-րդ մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար կամ դատապարտվել է ազատազրկման անզգուշությամբ կատարված հանցագործության համար:».

բ) 3-րդ մասը լրացնել «ե» կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«ե) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ»:

գ) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Խորհրդում թափուր տեղ առաջանալու դեպքում Խորհրդի նախագահը գրավոր տեղեկացնում է Հանրապետության Նախագահին, որը մեկշաբաթյա ժամկետում ստեղծում է 7 անդամից բաղկացած ժամանակավոր մրցութային հանձնաժողով:

Մրցութային հանձնաժողովի անդամները կարող են լինել գիտության, կրթության, մշակույթի, լրագրության բնագավառների հեղինակավոր գործիչներ և (կամ) գիտության, կրթության, մշակույթի, լրագրության, իրավագիտության, հեռահաղորդակցության բնագավառներով գրադարձությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության պետական ծառայողները չեն կարող ընդգրկվել մրցութային հանձնաժողովի կազմում:

Մրցութային հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար:

Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:

Թեկնածուներն առաջադրվում են ինքնառաջադրմամբ և պետք է ներկայացնեն առնվազն երեք հասարակական մասնագիտական կազմակերպության երաշխավորություն, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են և գործում են առնվազն հինգ տարի:

Մրցութային հանձնաժողովը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մասովի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի բոլոր բարություն մասնակցել մրցույթի, եթե նա չի բավարարում սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված պահանջներին կամ առկա է սույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը: Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթի համար դիմել է մեկ մասնակից:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում է մրցութային հանձնաժողովը՝ մասնակիցների գիտելիքները ստուգելու համար՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,

բ) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի

գ) «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հմացությունը:

Համակարգում գետեղված հարցաշարը ոչ ուշ մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:

Թեստում յուրաքանչյուր հարց պետք է ունենա 3-4 ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

Հարցազրույցի փուլին իրավունք են ստանում մասնակցել թեստավորման առաջադրանքների առնվազն 90%-ին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցազրույց անցկացվում է գիտության, կրթության, նշակույթի, լրագրության բնագավառների, դրանց հիմնախնդիրներին ուղղված հեռուստատեսային ծրագրերի ստեղծման, լուսաբանման ուղղությամբ:

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն:

Մրցութային հանձնաժողովի անդամը քվեարկում է կողմ կամ դեմ և քվեարկության մասնակցած անդամների կեսից ավելին կողմ ճայներ հավաքածներից առավելագույն ճայներ աստացած թեկնածուն ճանաչվում է մրցույթում հաղթած:

Մրցույթի արդյունքները հրապարակվում է մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

Մրցույթի արդյունքները կարող է բողոքարկվել դատական կարգով:

Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ եզրակացությունը մրցութային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է գրավոր Հանրապետության Նախագահին:

Նախագահը մրցույթի արդյունքների հիման վրա, 7-օրյա ժամկետում հաղթած թեկնածուին հրամանագրով նշանակվում է համապատասխան պաշտոնում:

Եթե մրցույթի արդյունքով ոչ ոք չի ճանաչվել հաղթող (թեստավորման փուլում, ապա հարցազրույցի ժամանակ) ապա անցկացվում է նոր մրցույթ:

Եթե մրցութային հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չեն մասնակցում կեսից ավելին) ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում և անցկացվում է մրցույթ 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներում առկա են սույն օրենքի 29-րդ, 31-րդ հոդվածներով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Նոր մրցույթը է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչելու դեպքում՝ ընդհանուր հիմունքներով:

դ) 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 32-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «դ» կետը «կարգը» բառից հետո լրացնել «և ուղղությունները» բառերը:

բ) 1-ին մասի «ը» կետից հետո լրացնել նոր «ը» կետ հետևյալ բովանդակությամբ.

«ը» Հանրային հեռուստալներության և Հանրային ռադիոլներության գործադիր տնօրենները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում են Խորհրդի ճայների երկու երրորդով»:

գ) 3-րդ մասի 1-ին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 33-րդ հոդվածի

ա) 2-րդ մասի «ե» կետում «երկրում» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում» բառերով.

բ) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 35-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում Հանրային Հեռուստառադիորնկերության համար նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումները։ Այդ հատկացումները պետք է ապահովեն օրենքում ամրագրված՝ Խորհրդի լիազորությունների իրականացումը։

Խորհրդը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա՝ Հանրային հեռուստառադիորնկերության ծախսերի նախահաշիվը /բյուջեն/՝ առանձին տողով նշելով Խորհրդի, Հանրային հեռուստառնկերության և Հանրային ռադիորնկերությանը հատկացվելիք գումարները, և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, վերջինս էլ դրանք ներկայացնում է Հայաստանի Հնանրապետության Ազգային ժողովի հաստատմանը»։

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում «մարտի 1-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով, «և ֆինանսական» բառերը փոխարինել «, ֆինանսական, ինչպես նաև բոլոր քաղաքական ուժերին հատկացված եթերաժամանակի» բառերով։

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով) կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև հեռուստառնկերությունների և ռադիոռնկերությունների, այդ թվում Հանրային հեռուստառադիորնկերության գործունեության վերահսկումը»։

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 39-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային հանձնաժողովն անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ մրցութային կարգով, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ մրցութային կարգով վեց տարի ժամկետով, բացառությամբ առաջին կազմի։ Առաջին կազմի նշանակման ժամկետները սահմանված են սույն օրենքի անցումային դրույթներում։

Ազգային հանձնաժողովում թափուր տեղի առկայության դեպքում թափուր տեղում նշանակումը կամ ընտրությունը կատարվում են Սահմանադրության 83.2 հոդվածին համապատասխան, այնպես, որ անդամների կեսը ընտրված լինի Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակված լինի Հանրապետության Նախագահի կողմից։

Ազգային հանձնաժողովում թափուր տեղեր առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնում է համապատասխանաբար Հանրապետության Նախագահին կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:

Ազգային ժողովը հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Ազգային ժողովի որոշմամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հանրապետության Նախագահի կողմից նշանակվող հանձնաժողովի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Հանրապետության Նախագահը մեկշաբաթյա ժամկետում ստեղծում է 7 անդամից բաղկացած ժամանակավոր մրցութային հանձնաժողով:

Մրցութային հանձնաժողովի անդամները կարող են լինել գիտության, կրթության, մշակույթի, լրագրության բնագավառների հեղինակավոր գործիչներ և (կամ) գիտության, կրթության, մշակույթի, լրագրության, իրավագիտության, հեռահաղորդակցության բնագավառներով գրադարան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության պետական ծառայողները չեն կարող ընդգրկվել մրցութային հանձնաժողովի կազմում:

Մրցութային հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար:

Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:

Թեկնածուներն առաջադրվում են ինքնառաջադրմամբ և պետք է ներկայացնեն առնվազն երեք հասարակական մասնագիտական կազմակերպության երաշխավորություն, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են և գործում են առնվազն հինգ տարի:

Մրցութային հանձնաժողովը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մասովի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի բույլատրում մասնակցել մրցույթի, եթե նա չի բավարարում սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված պահանջներին կամ առկա է սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը: Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթի համար դիմել է մեկ մասնակից:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում է մրցութային հանձնաժողովը՝ մասնակիցների գիտելիքները ստուգելու համար՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,

բ) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի,

գ) «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի իմացությունը:

Համակարգում գետեղված հարցաշարը ոչ ուշ քան մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:

Թեստում յուրաքանչյուր հարց պետք է ունենա 3-4 ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

Հարցազրույցի փուլին իրավունք են ստանում մասնակցել թեստավորման առաջադրանքների առնվազն 90%-ին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցազրույց անցկացվում է գիտության, կրթության, մշակույթի, լրագրության բնագավառների, դրանց հիմնախնդիրներին ուղղված հեռուստատեսային ծրագրերի ստեղծման, լուսաբանման ուղղությամբ:

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն:

Մրցութային հանձնաժողովի անդամը քվեարկում է կողմ կամ դեմ և քվեարկության մասնակցած անդամների կեսից ավելին կողմ ձայներ հավաքածներից առավելագույն ձայներ ստած թեկնածուն ճանաչվում է մրցույթում հաղթած:

Մրցույթի արդյունքները հրապարակում է մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ եզրակացությունը մրցութային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է գրավոր Հանրապետության Նախագահին:

Նախագահը մրցույթի արդյունքների հիման վրա, 7-օրյա ժամկետում հաղթած թեկնածուին հրամանագրով նշանակվում է համապատասխան պաշտոնում:

Եթե մրցույթի արդյունքով ոչ ոք չի ճանաչվել հաղթող (թեստավորման փուլում, ապա հարցազրույցի ժամանակ) ապա անցկացվում է նոր մրցույթ:

Եթե մրցութային հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չեն մասնակցում կեսից ավելին) ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում և անցկացվում է մրցույթ 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներում առկա են սույն օրենքի 41-րդ, 45-րդ հոդվածներով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչելու դեպքում՝ ընդհանուր հիմունքներով:

Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)` իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ բափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:

Ազգային հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և նախագահի տեղակալ:

Նոյն անձը չի կարող ավել քան երկու անընդմեջ նշանակվել Ազգային հանձնաժողովի անդամ:»:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 40-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հեղորդում: Հաղորդումը ԱԺ է ներկայացնում Հանձնաժողովի նախագահը կամ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Հաղորդումը ԱԺ-ում քննարկվում է «ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ընդունվում է ի գիտություն:

Ազգային հանձնաժողովը իր հաղորդումը հրապարակում է մամուլում:»:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 41-րդ հոդվածի՝

ա) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային հանձնաժողովի անդամները, նրանց վարձատրության կարգը».

բ) 1-ին մասի «ունի բարձրագույն կրթություն, տիրապետում է հայոց լեզվին» բառերը փոխարինել «բարձրագույն կրթություն և տիրապետում է հայերենին» բառերով.

գ) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» կետով՝

«դ) դատապարտվել է և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.»:

դ) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքները իրականացնում են վճարովի հիմունքներով:»:

ՀՈԴՎԱԾ 13. Օրենքի 42-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «օրենսդրությամբ» բառը փոխարինել «իրավական այլ ակտերով» բառերով.

բ) 3-րդ մասում «սկզբունքներն են» բառերից հետո լրացնել «օրինականությունը, ժողովրդավարությունը» բառերը:

ՀՈԴՎԱԾ 14 . Օրենքի 45-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «ք» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ք) ընտրվել կամ նշանակվել է որևէ այլ պաշտոնի».

բ) 1-ին մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար կամ դատապարտվել է ազատազրկման անգուշությամբ կատարված հանցագործության համար:».

գ) ուժը կորցրած ճանաչել 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը:

ՀՈՂՎԱԾ 15. Օրենքի 46-րդ հոդվածի՝

ա) 2-րդ մասի «տեղակալը» բառից հետոլրացնել «անդամները» բառով.

բ) 2-րդ մասի վերջում լրացնել «և (կամ) նրանց փոխկապակցված անձինք» բառերը:

ՀՈՂՎԱԾ 16. Օրենքի 53-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Արտոնատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն արտոնագիր (լիցենզիա) է տալիս օրենքով սահմանված կարգով պետական տուրք մուծելուց հետո՝ 10-օրյա ժամկետում».

բ) Լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հեռարձակաման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար կախված տեխնիկական նախագծով նախատեսված հաղորդակների քանակից և հեռարձակվող հզորությունից.

Ուղղիոհաղորդիչ կայաններ 30 ՄՀց 300 ՄՀց հաճախային տիրույթում, հատկացված մեկ հաճախության համար, ըստ հաղորդիչների ճառագայթման հզորությունների	
- մինչև 100 Վտ ներառյալ	300 000
- 101 Վտ 500 Վտ ներառյալ	600 000
- 501 Վտ 1000 Վտ ներառյալ	900 000
- 1 ԿՎտ-ից բարձր	1 200 000 դրամ:
Հեռուստատեսային հաղորդիչ կայաններ մետրային և դեղինետրային տիրույթներում հատկացված մեկ հաճախության կապուղու համար ըստ զբաղեցրած հաճախության գոտու, հաստատված գործակցի և բնակչության թվաքանակի (հաշվարկը 1 մլն. բնակչի համար)	800 000
Հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ընդունիչ համակարգի բաշխիչ ցանցերը եթերային-կաբելային հեռուստատեսության համակարգեր, մեկ հաճախային կապուղու համար, ըստ հաղորդչի 1 Վտ հզորության	15 000

ՀՈԴՎԱԾ 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի (26 փետրվարի 2007թվական, ՀՕ- 308, այսուհետև՝ օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը «ԺԷ» կետից հետո լրանել նոր «ԺԷ» կետով, հետևյալ բովանդակությամբ՝

«ԺԷ» Ազգային ժողովի նիստում հայտարարում է հեռարձակման անկախ կարգավորող մարմնի անդամի թափուր տեղի մասին, դիմում խմբակցություններին՝ անդամի ընտրության մրցութային հանձնաժողովի թեկնածուների առաջադրման առաջարկով և դրանց հիման վրա ձևավորում մրցութային հանձնաժողով.»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 97-րդ հոդվածի՝

ա) 1-ին կետի 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սահմանադրության 83-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ պաշտոնում ընտրելու համար թեկնածուի առաջադրման իրավունքը պատկանում է խմբակցություններին և պատգամավորական խմբերին»:

բ) 1-ին կետը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սահմանադրության 83.2 հոդվածի համապատասխան հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվող անկախ կարգավորող մարմնի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրում է Ազգային ժողովը.»

Ազգային հանձնաժողովում թափուր տեղի առկայության դեպքում թափուր տեղում ընտրությունը կատարվում է Սահմանադրության 83.2 հոդվածին համապատասխան, այնպիս, որ անդամների կեսը ընտրված լինի Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակված լինի Հանրապետության Նախագահի կողմից:

Ազգային հանձնաժողովում թափուր տեղ առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնում է Ազգային ժողովի նախագահին:

Ազգային ժողովի նախագահը, Ազգային հանձնաժողովի նախագահի կողմից անկախ կարգավորող մարմնի անդամների թեկնածություններն առաջարելու համար Ազգային ժողովի նախագահի կողմից 7-օրյա ժամկետում ձևավորում է մրցութային հանձնաժողով:

Մրցութային հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր խմբակցություն, պատգամավորական խումբ առաջարկում է մեկական, իսկ խորհրդարանական ընդիմությունը երկու թեկնածու: Մրցութային հանձնաժողովի կազմում առաջադրվում են գիտության, կրթության, մշակույթի, լրագրության բնագավառների հեղինակավոր գործիչներ և (կամ) գիտության, կրթության, մշակույթի, լրագրության, իրավագիտության, հեռահաղորդակցության բնագավառներով գրադարձ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության պետական ծառայողները չեն կարող ընդգրկվել մրցութային հանձնաժողովի կազմում:

Մրցութային հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ: Թեկնածուներն առաջադրվում են ինքնառաջադրմամբ և պետք է ներկայացնեն առնվազն երեք հասարակական մասնագիտական կազմակերպության ներաշխավորություն, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են և գործում են առնվազն հինգ տարի:

Մրցութային հանձնաժողովը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և գանգվածային լրատվության այլ միջոցներով:

Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի բույլատրում մասնակցել մրցույթի, եթե նա չի բավարարում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված պահանջներին կամ առկա է այդ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթի համար դիմել է մեկ մասնակից:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում է մրցութային հանձնաժողովը՝ մասնակիցների գիտելիքները ստուգելու համար՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,

բ) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի,

գ) «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի իմացությունը:

Համակարգչում զետեղված հարցաշարը ոչ ուշ քան մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:

Թեստում յուրաքանչյուր հարց պետք է ունենա 3-4 ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

Հարցազրույցի փուլին իրավունք են ստանում մասնակցել թեստավորման առաջադրանքների առնվազն 90%-ին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցազրույց անցկացվում է գիտության, կրթության, մշակույթի, լրագրության բնագավառների, դրանց հիմնախնդիրներին ուղղված հեռուստատեսային ծրագրերի ստեղծման, լուսաբանման ուղղությամբ:

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն:

Մրցութային հանձնաժողովի անդամը քվեարկում է կողմ կամ դեմ և քվեարկության մասնակցած անդամների կեսից ավելին կողմ ձայներ հավաքածները ճանաչվում են մրցույթում հաղթած:

Մրցույթի արդյունքները հրապարակվում է մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

Մրցույթի արդյունքները նույն օրը կարող է գրավոր բողոքարկվել Ազգային ժողովի նախագահին կամ դատական կարգով:

Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը մրցութային հանձնաժողովի նախագահը ներկայացնում է գրավոր Ազգային ժողովի նախագահին:

Ազգային ժողովի նախագահը մրցույթի արդյունքներից ելնելով ճանաչվածին (ներին), եթե կա բողոք ներկայացնում է Ազգային ժողովի առաջիկա քառօրյա նիստում:

Ազգային ժողովը այդ մարմնի անդամներին մրցույթի արդյունքներից ելնելով ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Չի բացառվում, որ տվյալ պաշտոնում նշանակվի բողոք ներկայացնող քաղաքացին:

Եթե մրցույթի արդյունքով ոչ ոք չի ճանաչվել հաղթող (թեստավորման փուլում, ապա հարցազրույցի ժամանակ) ապա անցկացվում է նոր մրցույթ:

Եթե մրցութային հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չեն մասնակցում կեսից ավելին) ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում և անցկացվում է մրցույթ 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներում առկա են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 41-րդ հոդվածի կամ 45-րդ հոդվածներով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչելու դեպքում՝ ընդհանուր հիմունքներով:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ոք՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի պահանջների համաձայն:

Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)` իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ թափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:

Նույն անձը չի կարող ավել քան երկու անընդմեջ նշանակվել Ազգային հանձնաժողովի անդամ:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՖՈՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Հոդված 1. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի (28 դեկտեմբերի, 2001թ. ՀՕ-293.) 2-րդ հոդվածում «Հանձնաժողովի գործունեության սկզբունքներն են» բառերից հետո ավելացնել «օրինականությունը, ժողովրդավարությունը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի՝

- ա) 1-ին մասի «Հանրապետության Նախագահի կողմից» բառերից հետո լրացնել «մրցութային կարգով» բառերը:
- բ) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությունը.
«Հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքները իրականացնում են վճարովի հիմունքներով»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի «բաժնետերեր» (փայտեր) բառից հետո լրացնել «և (կամ)նրանց փոխկապակցված անձիք» բառերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի վերջին մասի «գույքային» բառը փոխարինել «գույք» բառով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածում «տեղակալը» բառից հետո լրացնել «, անդամները» բառը:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածում «, տեղակալը» բառից հետո լրացնել «, անդամները» բառը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրավարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքիր (1997 թվականի դեկտեմբերի 27-ի, ՀՕ-186) 19-րդ հոդվածում ավելացնել 10-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

10. Հեռուստառադիրադումների հեռարձակման արտանաժիրոց (լիցենզիա ստացող) իրավունք ստացած իրավանքանական անձից	բազային տուրքի հինգհարյուրապատիկի չափով
--	---

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակմանը հաջորդող տասնօրյա ժամկետում: